

Արձանագրություն թիվ 1

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,

կայացած 2017թ սեպտեմբերի 15-ին

Օրակարգը՝

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-18 ուս. տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները կուրատորների աշխատանքային ծրագրերի վերաբերյալ:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումը նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության, ինչպես նաև ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ
4. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ. Վ. Ղոչիկյան.

- Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ֆակուլտետի խորհրդի 2017-2018 ուս.տարվա աշխատանքային պլանի նախագիծը բաժանված էր ամբիոնի վարիչներին, մանրամասն ծանոթանալու և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելու համար: Ամբիոնների վարիչները կատարել են իրենց առաջարկությունները: Եղել է միայն մեկ առաջարկ՝ “Անալիտիկ և անօրգանական” քիմիայի ամբիոնի վարիչի կողմից: Նա առաջարկել է Ֆակուլտետի ՈւԻՄ նախագահի հաղորդումը կատարած աշխատանքների վերաբերյալ ապրիլ ամսվա պլանից տեղափոխել դեկտեմբեր ամսվա պլանի մեջ:

Դեկանատի անդամները կստանան ֆակուլտետի խորհրդի 2017-2018 ուս.տարվա աշխատանքային նորացված պլանը: Առաջարկում եմ հաստատել ֆակուլտետի խորհրդի 2017-2018 ուս.տարվա աշխատանքային պլանը:

Խորհուրդը քվեարկությամբ միաձայն հաստատեց ֆակուլտետի խորհրդի 2017-2018 ուս.տարվա աշխատանքային պլանը:

ՔԻՄԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

2017-18 ուսումնական տարվա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Սեպտեմբեր

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2017-18 ուս.տարվա աշխատանքային պլանի քննարկում և հաստատում:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումները կուրատորների աշխատանքային ծրագրերի վերաբերյալ:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումները նոր ուսումնական տարում լաբորատորիաների պատրաստվածության վերաբերյալ, ինչպես նաև հաղորդում լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունների մասին :
4. Ընթացիկ հարցեր:

Հոկտեմբեր

1. Ֆակուլտետի մեթոդական խորհրդի նախագահի հաղորդումը մագիստրատուրայի և բակալավրիատի ուսումնական ծրագրերում կատարված փոփոխությունների վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը գիտա-մեթոդական սեմինարների կազմակերպման մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Նոյեմբեր

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:
2. Պետական քննությունների հարցաշարերի քննարկում և հաստատում:
3. Ամբիոնների վարիչների հաղորդումը կուրսային աշխատանքների ընթացքի վերաբերյալ:
4. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Դեկտեմբեր

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը մագիստրոսական ծրագրերի գիտական սեմինարների կազմակերպման մասին:
2. Հաղորդում բազային ֆինանսավորմամբ և դրամաշնորհային գիտական թեմաների մասին, հաշվետվությունների հաստատում:

3. Ֆակուլտետի ՈւՄ նախագիի հաղորդումը կատարված աշխատանքների վերաբերյալ
4. Ձմեռային քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների քննարկում:
5. Մանկավարժական և ուսումնաարտադրական պրակտիկաների արդյունքների քննարկում:
6. Ընթացիկ հարցեր:

Հունվար

1. Ամբիոնների վարիչների հաղորդումը քննաշրջանի ընթացքի վերաբերյալ:
2. Ամբիոնների վարիչների հաղորդումը դասալսումների մասին:
3. Բազային ֆինանսավորմամբ՝ Անօրգանական նյութերի սինթեզ և հետազոտություն,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավարի հաշվետվություն
4. Ընթացիկ հարցեր:

Փետրվար

1. Քննաշրջանի արդյունքների քննարկում:
2. Մագիստրոսական ծրագրերով ուսուցման վիճակի մասին ամբիոնների վարիչների հաղորդումների լսում:
3. Բազային ֆինանսավորմամբ՝ Կենսաբանական նշանակություն ունեցող համակարգերում մոլեկուլային փոխազդեցություններ,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավարի հաշվետվություն
4. Ընթացիկ հարցեր:

Մարտ

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Մագիստրոսական և բակալավրիական ուսումնական ծրագրերի վերանայում և հաստատում:
3. Բազային ֆինանսավորմամբ՝ Ազոտ-, թթվածին- և ծծումբ պարունակող հետերոցիկլիկ միացությունների քիմիա,, ԳՀ լաբորատորիայի գիտական ղեկավարի հաշվետվություն
4. Ընթացիկ հարցեր:

Ապրիլ

1. Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2017-18 ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:
3. Կուրսային աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:

4. Ընթացիկ հարցեր:

Մայիս

1. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվության լսումը 2017-168ուս. տարում կատարած աշխատանքների մասին:
2. Ֆակուլտետի ՈւԳԸ նախագահի հաղորդումը կատարված աշխատանքների մասին:
3. Ընթացիկ հարցեր:

Հունիս

1. Պետական քննությունների, մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքների քննարկում:
2. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաշվետվությունը 2017-18 ուս. Տարում կատարած աշխատանքների վերաբերյալ:
3. «Դասախոսը ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցումների արդյունքների քննարկում:
4. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում:
5. Ընթացիկ հարցեր:

2. Լսեցին- Քիմիայի ֆակուլտետում կուրատորական աշխատանքով զբաղվում են դոցենտ Ռ.Պ Մխիթարյանը և դոցենտ Ա.Ի.Մարտիրյանը: Աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Սեպտեմբերի 1-ին առաջին կուրսեցիներին հանդիսավոր դիմավորելուց և ֆակուլտետը ներկայացնելուց հետո ծանոթացրել են ԵՊՀ-ի կանոնադրության և մասնաշենքերի հետ: Աշխատանքները շարունակվում են:

3.Լսեցին – Ամբիոնի վարիչները ներկայացրեցին ամբիոնների պատրաստվածության աստիճանը: Լաբորատորիաները հազեցած են անհրաժեշտ նյութերով աշխատանքները բարձր որակով իրականացնելու համար: Լաբորատոր աշխատանքների ծրագրերում կատարված փոփոխությունները միայն դրական ազեցություն կունենան և կապահովեն ուսանողների փորձառությունը:

4. Նախագահ՝ պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան- Ընթացիկ հարցերում ունենք երեք կարևոր հիմնահարցեր

Ա. Քիմիայի ֆակուլտետից անվանական կրթաթոշակ նշանակելու հարցը:

Որոշեցին - ա/ Շարունակել «Քիմիա» մասնագիտությամբ մագիստրատուրայի 2-րդ կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանող Արեն Յուրիկի Ամիրբեկյանի Ստեփան Ղամբարյանի անվան կրթաթոշակը:

բ/ Շարունակել «Քիմիա» մասնագիտությամբ մագիստրատուրայի 1-ին կուրսի գերազանց առաջադիմությամբ ուսանողուհի Դիաննա Կարենի Հայրապետյանի Աիդա Ավետիսյանի անվան կրթաթոշակը:

Բ. Լսեցին – Ֆիզիկական և կուլտի քիմիայի ամբիոնից ներկայացվել է կրտսեր գիտաշխատող Գոհար Աշոտի Շահինյանի “ Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր-2016” շրջանակներում իրականացվող գիտական թեմայի հաշվետվությունը: Գ. Շահինյանը “ Օրգանական բևեռային լուծիչ պարունակող ջրային միկրոէմուլսիաների ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները” գիտական թեմայի իրականացման համար պայմանագիր է կնքել 9 ամսով՝ 09.01.2017-29.09.2017 : Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է շրջված միցալային համակարգերի ուսումնասիրություններ տարբեր մեթոդներով: Աշխատանքների արդյունները գրախոսման փուլում են գտնվում “Коллоидный Журнал” ամսագրում:

Որոշեցին - Ընդունել Գ. Շահինյանի “ Օրգանական բևեռային լուծիչ պարունակող ջրային միկրոէմուլսիաների ֆիզիկաքիմիական առանձնահատկությունները” գիտական թեմայի ամփոփիչ հաշվետվությունը՝ հիմնվելով “ Ֆիզիկական և կուլտի” քիմիայի ամբիոնի թիվ 1 նիստի արձանագրության վրա ,կայացած 30.08.2017թ-ին:

Գ. Լսեցին- Դեկան Տ.Վ. Ղոչիկյանը նշեց, որ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնից ֆակուլտետի գիտ. խորհուրդ է ներկայացվել ամբիոնի դոցենտ, ք.գ.թ Լ.Ռ.Հարությունյանի դոկտորական ատենախոսությունը: Հայցորդը ամբիոնի ընդլայնված նիստում արդեն իսկ ելույթ է ունեցել և արժանացել ամբիոնի դրական կարծիքին: Այժմ լսենք Լ.Ռ.Հարությունյանի “Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային ակտիվ նյութ-ամինաթթու/վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը քիմիական ռեակցիաներում” վերնագրով դոկտորական ատենախոսությունը:

Լ.Ռ Հարությունյանի ելույթը կցվում:

Աշխատանքի ներկայացումից հետո, ելույթ ունեցան Կ.Ռ.Գրիգորյանը, Ռ.Պ.Մխիթարյանը, Գ.Փիրումյանը, Ն.Ա.Դուրգարյանը, Հ.Գ.Խաչատրյանը:

Որոշեցին – Հաշվի առնելով անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի կարծիքը՝ ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց որոշակի ձևափոխումներից և ճշգրտումներից հետո հաստատել “Մոլեկուլային փոխազդեցությունները մակերևութային ակտիվ նյութ-ամինաթթու/վիտամին-ջուր համակարգերում և դրանց դերը քիմիական ռեակցիաներում”՝ վերնագրով Լ.Ռ. դոկտորական ատենախոսության թեման և երաշխավորել պաշտպանության:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղուչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան